ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի «ԱՍՄՈՒՆՔ» ԽՄԲԱԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ

Խմբակը գործելու է կրթական երկրորդ և երրորդ աստիճաններում

ԺԱՄԱՔԱՆԱԿ

Խմբակին հատկացված ժամաքանակը 68 ժամ՝ շաբաթական 2 դասաժամով, տևողությունը՝ 1 ուսումնական տարի՝ 7-9-րդ և 10-12-րդ դասարաններում

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

«Ասմունք» խմբակը համարվում է արտադասարանական գործունեության կարևոր տեսակներից մեկը: Խմբակի պարապմունքները նպաստում են սովորողների ընթերցանության, բանավոր խոսքի, համադրական-վերլուծական, ստեղծագործական կարողությունների զարգացմանը և գրականության դասերի ընթացքում ձեռք բերած գիտելիքների և հմտությունների ամրապնդմանը:

«Ասմունք» խմբակի գործունեության արդյունքում կզարգանան սովորողների խոսքը, հետազոտական հարցադրումներ կատարելու, վարկածներ առաջադրելու, համադրելու, արժևորելու, ստեղծագործական աշխատանքներ պլանավորելու և իրականացնելու, կատարած աշխատանքները ՏՀՏ միջոցներով հանրայնացնելու և հասարակական իրազեկմանը նպաստելու կարողությունները, կնպաստի հիմնավոր գիտելիքների ձեռքբերմանը, արժևորմանը, պահպանմանը և հետագա փոխանցմանը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Ներկայացնել գրողի կենսագրությունը, ապրած ժամանակը, պատմական ժամանակաշրջանը, անցած ստեղծագործությունը
2. Ձևավորել և զարգացնել աշակերտների կապակցված բանավոր խոսքը, հնչերանգային/ ինտոնացիոն արտասանության կարողություններ՝ կապերը լեզվի և գրականության և արվեստի այլ բնագավառների միջև/ երաժշտություն, նկարչություն, ևն.:
3. Արտահայտել ստեղծագործության մեջ հեղինակի առաջադրած մտքերը, խոհերը, զգացմունքները՝ ընկալել ստեղծագործության իմաստը, գաղափարը, տրամադրությունը
4. Նպաստել տրամաբանական, զգացմունքային և արտահայտիչ արտասանությանը, սովորողի քննադատական-վերլուծականի մտքի զարգացմանը. համադպրոցական միջոցառումներին, ասմունքի և ընթերցանության մրցույթներին մասնակցելուն:
5. Արժևորել հայ և համաշխարհային գրականության իմացությունը՝ որպես սեփական անձի ձևավորման և ինքնաճանաչման կարևոր պայման:

ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ստեղծել մտերմիկ-համագործակցային միջավայր՝ նպաստելով սովորողների կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը:
- Աշխատանքներ տանել սովորողների առոգանությունը բարելավելու ուղղությամբ:
- Ուշադիր լինել բանաստեղծների ապրած ժամանակաշրջանի և դրա ազդեցությամբ գրածի ճիշտ ընկալմանը, սովորողի քննադատական մտքի զարգացմանը:
- Հաճախակի կազմակերպել միջոցառումներ, հանրայնացնել սովորողների ասմունքները, կազմակերպված միջոցառումները:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Խմբակի անդամները կկարողանան

- Հասկանալ բանաստեղծության՝ որպես առանձին կառուցվածքային ամբողջության կառուցվածքային տարրերը, դրանց փոխկապակցվածությունը, եզրույթները, բանաստեղծության ներքին զարգացումը:
- Արտահայտիչ կարդալ տեքստը՝ փոխանցելով զգացողություն, գաղափար, խոսքի գեղագիտություն:
- Ուսումնասիրել և մեկնաբանել գրողի բառապաշարը:
- Իմանալ լեզվի արտասանական երանգավորման համալիր միջոցները;
- Բացատրել՝ ինչ կերպ է արտահայտվում տեքստում հույզը, զգացմունքը:
- Ճանաչել հայ բանաստեղծներին և կսովորեն նրանց ստեղծագործությունները:
- Արտահայտել սեփական տեսակետը, լսել դիմացինի կարծիքը, դրսևորել քննադատական մտածողություն, արդյունավետ համագործակցել:
- Համեմատել և հակադրել ստեղծագործությունները, գրողների ոճը, պատկերները և այլն:
- Ընդհանրական պատկերացում կազմել տաղաչափության և բանաստեղծական ռիթմի մասին:
- Հիմնավորել տեքստի գեղագիտությունը, արդիականությունը:
- Հիմնավորել և մեկնաբանել սեփական տեսակետը:
- Ստեղծել գրավոր և բանավոր խոսք (էսսե, ելույթ, գովազդ, փոթքասթ, սահիկաշար և այլն):
- Ձեռք բերել և կիրառել գրականագիտական գիտելիքներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ, ՀՂՈՒՄՆԵՐ

Հովհաննես Թումանյան, երկերի լիակատար ժողովածու

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ. «ԵՍ ՄԻՇՏ ՁԵԶ ՀԵՏ ԵՄ, ՁԵՐ ՄԵՋ ԵՄ...» ֆիլմ https://youtu.be/1cZA_Q1hU4E

Պոեմներ.

«Մարոն» https://youtu.be/bkLZbEvt_P4

Ընտիր երկեր, հատ. 1. Բանաստեղծություններ, Պոեմներ, Բալլադներ, Լեգենդներ, Քառյակներ, Առակներ, Թարգմանություններ, Երևան, 1985, 464 էջ:

Ավետիք Իսահակյան,

Երկերի ժողովածու, հատ. 1. Բանաստեղծություններ, Երևան, 1958, 400 էջ:

Երկերի ժողովածու, հատ. 2. Պոեմներ, Լեգենդներ և բալլադներ,

Հովհաննես Շիրազ https://youtu.be/6glDxGPgejM

«Հանճարեղ խելագարը» https://youtu.be/wp2hClBAcVA

«Գտա» https://youtu.be/p8pO32R2QNw

Հովհաննես Շիրազ - «Հայոց Դանթեականը» https://youtu.be/UZ99Bt_17Sk

Շիրազ. «Հուշարձան Մայրիկիս» (ամբողջական գիրքը՝ Հայկ Բլբուլյանի ընթերցմամբ)

https://youtu.be/EQwLYbpA7R8

ԾՐԱԳՐԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ
(ՏԱՐԵԿԱՆ/ԱՄՍԱԿԱՆ/ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ)

Հ/Հ	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ՆՊԱՏԱԿ	ԺԱՄ	ՆՇՈՒՄՆԵՐ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ 22 ժամ				
1.	Հ.Թումանյան. կենսագրական փաստեր.ազգանվան ծագումնաբանություն, ընտանիք և մանկություն	Կիմանա կենսագրական հետաքրքիր փաստեր	1	
2.	Կրթություն, աշխատանքային և հասարակական-քաղաքական գործունեություն,	Կծանոթանա Հովի. Թումանյանի հասարակական-քաղաքական գործունեությանը	1	
3-6	ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ. «ԵՍ ՄԻՇՏ ՁԵԶ ՀԵՏ ԵՄ, ՁԵՐ ՄԵՋ ԵՄ...» ֆիլմ https://youtu.be/1cZA_Q1hU4E	Կարժորի Հովի. Թումանյանին՝ որպես Ամենայն հայոց բանաստեղծ	3	
7	Հովհաննես Թումանյանի երեխաները, կենսագրական տեղեկություններ նրանց մասին	Կծանոթանա Հովի. Թումանյանի ընտանեկան կյանքին, կիմանա երեխաների անունները, կենս. տեղեկություններ	1	
8-10	Մանկական բանաստեղծություններ	Իր ընտրությամբ կսովորի մի քանի բանաստեղծություններ	2	
11-13	Բանաստեղծություններ	Իր ընտրությամբ կսովորի մի քանի բանաստեղծություններ	3	
14-15	Պոեմներ. «Մարոն» https://youtu.be/bkLZbEvt_P4	Կընթերցի պոեմը՝ հետևելով առոգանությանը, կներկայացնի գրողի ապրած ժամանակաշրջանը, տիրող նահապետական բարքերը	2	
16-	Պոեմներ.	Կընթերցի պոեմը՝	2	

17	«Լոռեցի Սաքոն»	հետևելով առոգանությանը		
18-19	Պոեմներ. «Հառաչանք»	Կիմանա պոեմի բովանդակությունը, կձևավորի սեփական կարծիք	2	
20-21	Հովհ. Թումանյանի սևագիր և անավարտ քառյակները	Կիմանան Թումանյանի չտպագրված քառյակները	2	
22	Այցելություն Հովհ. Թումանյանի տուն-թանգարան. **Բաց դաս. «Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության»**	Կտեսնեն գրողի հարազատ գյուղը, ապրած տունը, իրերը: Բաց դասը սովորողների մեջ կբարձրացնի պատասխանատվության զգացումը	1	
ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ				
23	Ավետիք Իսահակյան. Կենսագրական փաստեր Մի սիրո պատմություն «Ախ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ»	Կիմանա կենսագրական հետաքրքիր փաստեր	1	
24	Փ/ֆ «Ավետիք Իսահակյան. Վարպետը» Ավ. Իսահակյանի ապրած ժամանակաշրջանը, «Ես որ մեռնիմ, ինձ կթաղեք Ալագյազի լանջերում»	Կարժորեն Ավ. Իսահակյանին՝ որպես Վարպետի	2	
25-35	Բանաստեղծություններ աշակերտների ընտրությամբ. «Բինգյոլ», «Նոր տարվա առավոտյան»,«Նոր տարու գիշերը» «Ողջույն ամենքին», «Ասում են թե դու այնպես…», «Մեկը չեղավ, որ իմանար վշտերս», «Մենակ մանկության օրերն են անուշ», «Օտար, ամայի ճամփեքի վրա», «Նորից եկան	Բանաստեղծությունների միջոցով կճանաչեն մեծ գրողին, պատկերավորման-արտահայտչական միջոցների դուրսբերման շնորհիվ կհարստացնեն բառապաշարը, խոսքի պատկերավորությունը	10	

	գարնան անուշ օրերը», «Ազատության զանգ» «Որսկան ախպեր»			
36-39	«Ալագյազի մանիներ». Բանաստեղծություններ աշակերտների ընտրությամբ	Կընթերցի պոեմը՝ հետևելով առոգանությանը, կներկայացնի գրողի ապրած բնաշխարհը՝ նույն պատկերավորման միջոցներով, ինչպես ներկայացրել է գրողը: Կասմունքի իր ընտրած բանաստեղծությունները	**4**	
40-41	«Սասմա Մհեր» պոեմը	Կընթերցեն Ավ. Իսահակյանի մշակումը, կհամեմատեն էպոսի հետ, անգիր կսովորեն իրենց ընտրած հատվածները	2	
42-43	«Մոր սիրտը» բանաստեղությունը, «Մայրը». Շիրակի ավանդավեպ	Կկարդա, կասմունքի բանաստեղծությունը, կիմանա՝ ինչ է ավանդավեպը	**2**	
44-45	«Իրիցկնկա աղբյուրը». Շիրակի ավանդավեպ	Կծանոթանա Շիրակի ավանդազրույցներին, ըստ ցանկության կսովորի անգիր	**2**	
46	Այցելություն Ավ. Իսահակյանի տուն-թանգարան. Բաց դաս. «Մեծ Վարպետը»	Կտեսնեն Ավ. Իսահակյանի տունը, իրերը: Բաց դասը սովորողների մեջ կբարձրացնի պատասխանատվության զգացումը:	**1**	
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ				
47.	**Հովհ. Շիրազ Կենսագրական փաստեր.**	Կիմանա կենսագրական տեղեկություններ Հովհ.	**1**	

	Հետաքրքիր և հիշարժան դեպքեր	Շիրազի մասին		
48-49	«Հանճարեղ խելագարը» https://youtu.be/wp2hClBAcVA	Կլսեն Շիրազի ձայնով արտասանվող բանաստեղծությունը	**2**	
50-51	«Գտա» https://youtu.be/p8pO32R2QNw	Բանաստեղծության միջոցով կներկայացնեն Շիրազի մանկությունը	**2**	
52-58	«Հուշարձան մայրիկիս» https://youtu.be/EQwLYbpA7R Բանաստեղծություններ աշակերտների ընտրությամբ	Կկարդան բանաստեղծություններ «Հուշարձան մայրիկիս» ժողովածուից, իրենց ընտրությամբ կսովորեն անգիրներ	**6**	
59-61	**«**Բիբլիական». հատվածներ աշակերտների ընտրությամբ	Կսովորեն ասմունքել հատվածներ «Բիբլիական» պոեմից	**3**	
62-66	Հովհաննես Շիրազ - «Հայոց դանթեականը» https://youtu.be/UZ99Bt_17Sk	Կսովորեն ասմունքել հատվածներ «Հայոց դանթեականը» պոեմից	**4**	
67-68	Այցելություն Հովի. Շիրազի տուն-թանգարան. Բաց դաս. «Հանճարեղ խելագարը»	«Ասմունք» խմբակը սովորողների մեջ կձևավորի թիմային աշխատանք	**2**	